

«Տնտեսական անվտանգություն» եզրը, ինչպես է «ազգային անվտանգությունը» առաջացել է 20-րդ դարի կեսերին: Մինչև Երկրորդ աշխարհամարտն ավելի շատ խոսվում էր «պաշտպանության» և «պաշտպանունակության» մասին: Սակայն արդեն 1947թ. ԱՄՆ-ում ընդունվեց «Ազգային անվտանգության մասին» օրենք, եւ ձեւավորվեց նախագահին առընթեր համապատասխան խորհուրդ: Վերջինիս հանձնարարվեց հիմնավորել ոչ միայն արտաքին, պաշտպանությանն առնչվող, այլեւ տնտեսական քաղաքականությանը վերաբերող որոշումներ [1, էջ 67-68]:

Համաշխարհային տնտեսության ինտեգրվելու ժամանակակից պայմաններում ՀՀ տնտեսական անվտանգության ապահովման իրավական բազան (դաշտը) նոր է սկսում ձեռք բերել ավելի պրագմատիկ մոտեցումներով պայմանավորված գործընթացի տեսք:

Նշենք, որ տնտեսական անվտանգության ապահովման հիմնական պատասխանատվությունը դրված է պետության՝ որպես քաղաքական համակարգի կենտրոնական եւ կարեւորագույն ինստիտուտի վրա: Սակայն դա չի նշանակում, որ տնտեսական անվտանգության ապահովման առանձին գործառնություններ վերապահված չեն այլ ինստիտուտների (սուբյեկտների), եւ դրանք չեն մասնակցում այդ գործընթացին: Տնտեսական անվտանգության ապահովման համակարգը ԱՄ ապահովման համակարգի անբաժանելի մասն է, որտեղ գործառնություններ են վերապահված բազմաթիվ ու տարաբնույթ, պետական եւ ոչ պետական ինստիտուտների:

Տնտեսական անվտանգության ապահովման ընդհանուր իրավական սկզբունքները հիմնվում են ՀՀ Սահմանադրության, օրենքների եւ այդ ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական այլ ակտերի վրա:

Տնտեսական անվտանգության ապահովման մեխանիզմի գործունեությունը կարելի է պատկերացնել այսպես. պետությունը ընկալում է սպառնալիքը, գնահատում այն, մշակում քաղաքականություն եւ կոնկրետ միջոցառումներ՝ ուղղված ի հայտ եկած կամ հնարավոր սպառնալիքների արգելափակմանը կամ չեզոքացմանը եւ իրագործում այն իրավական ձեւերով ու միջոցներով:

Տնտեսական անվտանգության մեխանիզմի գործունեության հիմքը սպառնալիքի չեզոքացումը եւ վերացումն են:

ՀՀ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներն են պետության, հասարակության, ընտանիքի եւ անհատի գոյության դեմ ուղղված, դրանց հիմքերը խարխուղ կամ հեռանկարային վտանգ ներկայացնող երեւույթները, գործողություններն ու անգործությունը: Այդպիսի սպառնալիքներ կարող են ծագել երկրի ներսում (ներքին սպառնալիքներ) եւ երկրի սահմաններից դուրս (արտաքին սպառնալիքներ) [2, էջ 17]:

Պետության անվտանգության սպառնալիքների ձեւավոր-

ման նախադրյալ է երկրում, միջազգային ասպարեզում, մարդկային գործունեության տարբեր ոլորտներում հասարակական զարգացման արտաքին եւ ներքին հակասությունների բազմազանությունը: Դա միաժամանակ գլխավոր ելակետային չափանիշն է այն հասարակական հարաբերությունների վերհաման, որոնք եւ ձեւավորում են տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում սոցիալական փոխազդեցության համակարգը:

Հակասությունները եւ անհամապատասխանությունները այսօր առավել վառ դրսևորվում են սոցիալական, տնտեսական եւ քաղաքական ոլորտներում: Առանձնացնենք դրանցից մի քանիսը.

- ՀՀ Սահմանադրությամբ հռչակված՝ քաղաքացիների սեփականության իրավունքի եւ սեփականաշնորհման արդյունքում դրա իրական բաշխման միջեւ,
- տնտեսական ազատական բարեփոխումների եւ բնակչության սոցիալական վիճակի միջեւ,
- նախկինում ձեւավորված ու ներկայում ձեւավորվող շուկայական տնտեսության եւ այդ հարաբերությունները կարգավորող իրավական բազայի գործընթացներից ետ մնալու միջեւ,
- բարեփոխումների հայտարարված նպատակների ու խնդիրների եւ դրանք լիարժեք իրականացնելու պետության անկարողության միջեւ,
- բնակչության մեծ մասի աղքատացման եւ հասարակության նեղ շերտի մոտ հարստության կուտակման միջեւ,
- երկրի տնտեսական ներուժի, արդյունաբերական համալիրի, գյուղատնտեսության, գիտության, բնական ռեսուրսների պահպանման եւ համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելու խնդրի միջեւ:

Հակասությունները հարթելը, անհրաժեշտ հավասարակշռություն պահպանելը, ինչը կհամապատասխանի անձի շահերին, ներդաշնակված սոցիալական եւ մասնագիտական բոլոր խմբերի շահերի հետ, կազմում են անվտանգության ապահովման հիմնական բովանդակությունը:

Հակասությունները հարթելը իրականացվում է այն կրողների փոխգործակցության դեպքում: Փոխգործակցությունը իրականացվում է երկու ձեւով.

- ✓ պայքար (բախումնային ուղի),
- ✓ համագործակցություն (փոխգիշումնային ուղի):

Անկասկած է, որ ցանկացած հասարակության համար նախընտրելի է համագործակցության ուղին, որը ենթադրում է տարբեր խմբերի հետաքրքրությունների հավասարակշռում, հակասությունների լուծման օպտիմալ ուղու ընտրություն, այդ թվում՝ փոխգիշման հիմքով:

Տնտեսության ոլորտում հակասությունների հարթեցումը եւ լուծումը հնարավոր են այդ ոլորտի հասարակական հարաբերությունների վրա արդյունավետ, նպատակաուղղված եւ դրա-

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐԶ

Արտյոմ
ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԱԾ ԳՈՒԿ
ամբիոնի
ղեկավար,
տեխնիկական եւ
իրավաբանական
գիտությունների
թեկնածու



կան ազդեցության ճանապարհով: Դրանց կարգավորման հիմնական կարեւոր միջոցը իրավական նորմերն են:

Իրավական նորմերը հասարակության զարգացման արդյունք են: Դրանք սահմանում են վարքագծի դրական կանոններ, կազմակերպում են հասարակական հարաբերությունները եւ համակարգում սոցիալական կապերը [3, էջ 776]:

Հասարակական հարաբերությունների վրա իրավական նորմերի ազդեցությունը իրացվում է հասարակական հարաբերությունների մասնակիցների իրավական մշակույթի եւ իրավագիտակցության միջոցով: Դրա հետ կապված՝ արժէ նշել տնտեսության ոլորտում հասարակական հարաբերությունների մասնակիցների իրավական մշակույթի եւ իրավագիտակցության որոշ առանձնահատկություններ:

Պատմականորեն ձեւավորվել է այնպէս, որ նախկին խորհրդային վարչակազմի գոյության ընթացքում ծնվել է այնպիսի յուրահատուկ զանգվածային իրավագիտակցություն, որ տնտեսական ոլորտի իրավական նորմերը ներկայացնում էին ինչ-որ արատարկեցի, եւ դրանց խախտումը ինչ-որ աստիճանով նույնիսկ չէր համարվում դատապարտելի: Զաղաքացիների վարքագծում այդ կարծրատիպը մինչեւ այժմ չի հաղթահարվել:

Շուկայական տնտեսության ուղին ընտրած ցանկացած երկիր ունի շուկայական հարաբերությունների իր առանձնահատկությունը, որը տարբերվում է շուկայական այլ մոդելներից: Շուկան տարբեր երկրներում աշխատում է տարբեր կերպ: Մի դեպքում շուկայական մոդելը տալիս է լավ արդյունքներ, այլ դեպքերում՝ պրակտիկորեն ոչ մի: Դա վկայում է, որ տնտեսության արդյունավետությունը կախված է ոչ միայն շուկայական հարաբերություններից, այլեւ հասարակության ընդհանուր մշակութային մակարդակից եւ իրավագիտակցությունից:

Անհրաժեշտ է նշել, որ տնտեսական անվտանգության սպառնալիքներին հակազդումը պահանջում է ոչ միայն տնտեսական եւ քաղաքական բարձր պրոֆեսիոնալ գործողություններ, այլեւ հասարակության մեջ գերշիջող սոցիալ-հոգեբանական ձեւավորված պատկերացումների փոփոխություն:

Տնտեսական անվտանգության տեսանկյունից՝ նյութական ու հոգեւոր բարիքների արտադրության, բաշխման, փոխանակման եւ սպառման ոլորտներում հասարակական հարաբերությունների զարգացման դինամիկան կարող է կրել ինչպէս դրական, այնպէս էլ բացասական բնույթ:

Տնտեսական անվտանգության ամրապնդման համար հատուկ կարեւոր նշանակություն ունի տնտեսության վիճակի շեմային ցուցանիշների, որոնք սահմանում են տնտեսական անվտանգության ռիսկի գոտիները, իրավական ամրագրումը: Սակայն այսօր դեռեւս օրենսդրորեն չեն ամրագրվել տնտեսության վիճակի շեմային ցուցանիշները:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ ընդհանուր գծերով սահմանված են տնտեսական անվտանգությանն առնչվող հասկացություններ, մասնավորապէս՝ որպէս ազգային անվտանգության հիմնարար արժեքներին ծառայող գործոններ ու գործուղություններ, որոնց նպատակն է տնտեսության կայուն աճը*:

Տնտեսական անվտանգության ապահովման իրավական մեխանիզմը մեկ ամբողջության մեջ ընդգրկված իրավական են այլ միջոցների համակարգ է, որի օգնությամբ իրականացվում է պետաիրավական նպատակաուղղված ազդեցություն՝ նյութական եւ հոգեւոր բարիքների արտադրության, փոխանակման, բաշխման եւ սպառման ոլորտներում հասարակական հարաբերությունների վրա:

Տնտեսական անվտանգության ապահովման իրավական մեխանիզմը բաղկացած է հետեւյալ հիմնական տարրերից. իրավական նորմեր, հասարակական հարաբերություններ, ՀՀ տնտեսական անվտանգության սպառնալիքների ծագմանը նպաստող գործոնների պարտադիր մոնիտորինգ, իրավաստեղծում, իրավակիրառում:

Դինամիկայում այն ունի հետեւյալ տեսքը.

- Իրավական նորմերը կարգավորում են նյութական ու հոգեւոր բարիքների արտադրության, փոխանակման, բաշխման եւ սպառման ոլորտներում հասարակական հարաբերություն-

ներ՝ տնտեսական անվտանգության արտաքին եւ ներքին սպառնալիքների ծագման պատճառով առաջացած հակասությունների լուծման ու հարթեցման նպատակով:

- Արտաքին եւ ներքին սպառնալիքներից պաշտպանվածության աստիճանը հնարավորություն է տալիս գնահատել տնտեսական անվտանգության սպառնալիքների ծագմանը նպաստող գործոնների մոնիտորինգի որակը:

- Մոնիտորինգի արդյունքներով՝ տնտեսական անվտանգության սուբյեկտներն ընդունում են հետեւյալ որոշումները.

✓ գոյություն ունեցող իրավական նորմերի կիրառման ակտիվացման մասին (իրավակիրառման ասպեկտ),

✓ համապատասխան իրավական նորմերի ընդունում, փոփոխում եւ կասեցում (իրավաստեղծում):

Տնտեսական անվտանգության ոլորտի կարգավորման, տնտեսական բարեփոխումների ապահովման հարցերում ներգրավված են իրավունքի մի շարք ճյուղեր՝ սահմանադրական, քաղաքացիական, վարչական, ֆինանսական, քրեական եւ այլն:

Տնտեսական անվտանգության իրավական հիմքերն ընդգրկում են դրա նորմատիվային իրավական բազան, ինչպէս նաեւ իրավաբանական նորմերի իրացման իրավական ամբողջ մեխանիզմը, որը կարգավորում է դրա ապահովման գործունեությունը: Տնտեսական անվտանգության ապահովման իրավական հիմքի կառուցվածքն իրենից ներկայացնում է այդ բնագավառում իրավունքի, օրինականության եւ իրավակարգի դիալեկտիկական միասնությունը:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարելի է առաջարկել ՀՀ տնտեսական անվտանգության իրավական հիմքերի հետեւյալ սահմանումը. **ՀՀ տնտեսական անվտանգության իրավական հիմքը տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում անձի, հասարակության եւ պետության շահերը արտահայտող ելակետային իրավական դրույթների ամբողջությունն է:**

Ներկայում տնտեսական անվտանգության ապահովման նորմատիվ իրավական խնդիրները թույլ են մշակված. այն կայացման գործընթացում է:

Տնտեսական անվտանգության ապահովման իրավական կարգավորման հիմնախնդիրների նկատմամբ գոյություն ունի այնպիսի մոտեցում, որ տնտեսական հարաբերությունները կարգավորող՝ ՀՀ սահմանադրության եւ օրենքների, ինչպէս նաեւ ՀՀ նախագահի՝ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» հրահանգի համապատասխան դրույթներին ու նորմերին զուգահեռ, տնտեսական անվտանգության ապահովման իրավական աղբյուրների շարքին պետք է դասել նաեւ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքները, Զրեական օրենսգրքի համապատասխան նորմերը, Վարչա-նույթ սպառնալիքներից (հրդեհներ, արտակարգ պատահարներ, աղետներ) անվտանգության ապահովմանն ուղղված հատուկ նորմատիվ ակտեր, տնտեսական անվտանգության տարաբնույթ սուբյեկտների եւ օբյեկտների իրավական կարգավիճակը սահմանող ակտեր եւ այլն:

ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է. ՀՀ-ում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը, երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը (հոդվ. 8), յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել, տնօրինել եւ կտակել իր սեփականությունը (31), պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների եւ աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ (31.1), յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք (33.1), յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով եւ չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ (45) [4, էջ 7, 14-15, 18]:

Անհրաժեշտ է նշել նաեւ, որ տնտեսական անվտանգությունը, իրավական տեսանկյունից, ներառում է երկու բաղկացուցիչ.

- ✓ հասարակական հարաբերությունների այնպիսի վիճակ,

որի դեպքում նյութական բարիքների արտադրության, փոխանակման, բաշխման եւ սպառման ոլորտներում նրա մասնակիցների վարքագիծը համապատասխանում է սահմանված իրավական նորմերին,

✓ տնտեսական հարաբերությունները կարգավորող այնպիսի օրենսդրություն, որը համապատասխանում է տվյալ ոլորտում անվտանգության ապահովման պահանջներին:

ՀՀ Սահմանադրության մեջ ուղենշված է տնտեսական հարաբերությունների տեսակը, ինչն արտացոլված է Հիմնական օրենքի 8, 10, 31, 31.1, 32, 33.1, 34, 37, 45, 48 եւ այլ հոդվածների բովանդակությամբ: Բոլոր այս նորմերը ամրագրում են ՀՀ տնտեսական համակարգի հիմքերը եւ շուկայական հարաբերությունների կազմակերպման մոդելը:

Տնտեսական անվտանգության իրավական ապահովման գործում զգալի դեր են կատարում նաեւ.

● ՀՀ նախագահի՝ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», «ՀՀ անվտանգության խորհրդի մասին» հրամանագրերը,

● ՀՀ կառավարության որոշումները՝ «ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կանոնադրության հաստատման մասին», «ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության կանոնադրության հաստատման մասին», «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հաստատման մասին» եւ այլն,

● տնտեսական անվտանգության ապահովման ոլորտներին վերաբերող՝ պետական կառավարման մարմինների համապատասխան գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը:

Սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ նշված նորմատիվ իրավական բազայի վերլուծությունը վկայում է, որ դրանք չեն ստեղծում տնտեսական անվտանգության ապահովման իրավական բավարար պայմաններ: Հիմնական բացթողումները կարելի է ընդհանրացնել այսպես.

✓ այդ նորմատիվ ակտերի մի մասը չի բավարարում շուկայական հարաբերությունների պայմաններում օբյեկտների տնտեսական անվտանգության ապահովման պահանջները,

✓ օրենսդրությունը չի դարձել ամբողջական համակարգ, որն ունակ է անձի, հասարակության եւ պետության անվտանգությունը ապահովել տնտեսական անվտանգության նոր սպառնալիքներին,

✓ օրենսդրության մեջ առկա բացթողումների, հակասությունների վերացման ուղղությամբ հապաղումը հանգեցնում է այդ «դատարկությունների»՝ պետական իշխանության եւ կառավարման մարմինների կողմից միմյանց հակասող ակտերի ընդունման,

✓ ավարտված չէ տնտեսական անվտանգության ապահովման սուբյեկտների գործունեության եւ կազմակերպման իրավական ապահովումը:

Ընդհանրացնելով տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում անձի, հասարակության եւ պետության շահերը ուղղակի կամ անուղղակի արտացոլող նորմատիվ իրավական ակտերի հիմնական ուղղվածությունը եւ բովանդակությունը՝ դրանք կարելի է բաժանել երեք խմբի.

● Նորմատիվ իրավական ակտեր, որոնք կանոնակարգում են տնտեսական գործունեության բոլոր սուբյեկտների գործունեությունը: ՀՀ Զաղաքացիական օրենսգիրք, «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, Հարկային օրենսգիրք, Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք, Հողային օրենսգիրք եւ այլն:

● Նորմատիվ իրավական ակտեր, որոնք սահմանում են տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարությունը եւ մեխանիզմները: Այդ խմբի հիմնարար փաստաթուղթը պետք է հանդիսանա «ՀՀ ազգային անվտանգության հիմ-

նական դրույթների մասին» ՀՀ օրենքը, որը մշակման եւ քննարկումների փուլում է:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքում սահմանվում է ՀՀ ազգային անվտանգություն հասկացությունը. «պետության եւ հասարակության այնպիսի կացություն է, երբ ապահովված է անձի, հասարակության եւ պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական եւ հոգեւոր արժեքների, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին ու արտաքին սպառնալիքներից» [5]:

Ազգային անվտանգության տվյալ սահմանումը ընդհանրական է, հետեւաբար՝ տեսական եւ պրակտիկ նշանակության տեսանկյունից նաեւ սահմանափակ:

Այսպիսով՝ մեր երկրի տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում ամբողջական եւ արդյունավետ օրենսդրություն ապահովելու համար անհրաժեշտ ենք համարում հետեւյալը.

● արագացնել «ՀՀ ազգային անվտանգության հիմնական դրույթների մասին» ՀՀ օրենքի ընդունման աշխատանքները,

● արագացնել ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության իրացման համար ՀՀ կառավարության կողմից համապատասխան ծրագրերի մշակումն ու ընդունումը (մասնավորապես՝ Տնտեսական անվտանգության ապահովման հայեցակարգի մշակումը),

● նոր օրենսդրությանը համապատասխանեցնել տնտեսական անվտանգության ապահովման ոլորտում ազգային անվտանգության մարմինների գործունեությունը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերը,

● մշակել եւ հրապարակել նորմատիվ իրավական նոր ակտեր, որոնք անհրաժեշտ են տնտեսական անվտանգության ապահովման ուղղությամբ գործող օրենսդրության իրացման համար,

● կազմակերպչական ռեսուրսների զարգացում եւ արդյունավետ օգտագործում [6, էջ 10]:

Նկատի ունենալով հայության զգալի ներուժի առկայությունը քաղաքակրթական, տեխնոլոգիական եւ նյութական ոլորտներում, ներկայում առավել հրատապ են դառնում կազմակերպչական ռեսուրսի զարգացումը եւ արդյունավետ օգտագործումը, ինչն առանցքային խնդիր է արդյունավետ պետության ստեղծման ճանապարհին, որն էլ իր հերթին կհանդիսանա ազգային տնտեսության անվտանգ զարգացման հիմնական երաշխավորը [1, էջ 72]:

Օրենսդրական բարեփոխումները կայուն եւ զարգացած քաղաքացիական հասարակության կայացման նախապայման են: Դրանք կոչված են կարգավորել պետության, հասարակության եւ անձի գործունեության բոլոր ոլորտները՝ միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան: Ներկայում իրականացվող օրենսդրական բարեփոխումները պետք է ծառայեն միջազգային ինտեգրման եւ գլոբալ ֆինանսատնտեսական մրկայնության պայմաններում Հայաստանի Հանրապետության կայուն ու անվտանգ զարգացման ապահովման նպատակներին:

*Տես՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, 07.02.2007

Օգտագործված գրականություն

1. Ա. Ամբարյան, Ա. Տեր-Յարությունյան, Գրքաբացման պայմաններում տնտեսական անվտանգության առանձին տեսական հիմնախնդիրների շուրջ, 21-րդ դար, #4 (26), Երեւան 2009
2. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, Հայկական բանակ, 2007
3. Теория государства и права, Курс лекций, Под ред. Н.И. Мамызова и А.В.Малько, 2-е изд., перераб. и доп., М. 2003.
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Երեւան 2007
5. «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենք, 28.12.2001, Հոդված 1
6. Գ. Հարությունյան, Հայության կազմակերպման եւ տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները, 21-րդ դար, #2 (20), Երեւան 2008